ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունգարիա (Բուդապեշտ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Անի Թաթոյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հունգարիա, Բուդապեշտ, 2026 թվականի հունիսի 1-ից 4-ը:

4. Հրավիրող կողմը

Եվրոպայի խորհուրդ:

5. Գործուղման նպատակը

Գործուղման նպատակն էր մասնակցել Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված «Հաշվետվողականության և անվտանգության ամրապնդում. բռնարարների համար արդյունավետ ծրագրերի իրականացում» թեմայով միջազգային համաժողովին՝ ուսումնասիրելու ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի ներդրման և իրականացման եվրոպական փորձը, ծանոթանալու ոլորտում առկա չափանիշներին և մոտեցումներին, ինչպես

նաև նպաստելու Հայաստանի և միջազգային գործընկերների միջև փորձի փոխանակմանն ու համագործակցության զարգացմանը:

6. Քննարկված թեմաները

1) Բռնարարների համար նախատեսված ծրագրերի դերը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման գործում, ինչպես նաև դրանց տեղը զոհակենտրոն և բազմաոլորտ արձագանքման համակարգում:

2) «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 16-րդ հոդվածի պահանջները և ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի և GREVIO-ի կողմից մշակված չափանիշները:

3) Բռնարարների ծրագրերի արդյունավետության գնահատման, արդյունքների չափման, տվյալների հավաքագրման և մոնիթորինգի մեխանիզմները:

4) Տուժողների աջակցության ծառայությունների և բռնարարների ծրագրերի միջև համագործակցության մոդելները, տեղեկատվության փոխանակման և անվտանգության ապահովման գործիքները:

5) Գենդերազգայուն մոտեցումների ինտեգրումը բռնարարների հետ աշխատանքում, գենդերային կարծրատիպերի և բռնությունը արդարացնող վարքագծերի հաղթահարման մեթոդները:

6) Բազմաոլորտ համագործակցության կարևորությունը՝ արդարադատության, պրոբացիայի, սոցիալական պաշտպանության, առողջապահության և իրավապահ համակարգերի միջև:

7) Բռնարարների ծրագրերի ֆինանսավորման, կայունության և հաշվետվողականության ապահովման միջազգային փորձը:

8) Բռնարարների ծրագրերին ուղղորդման կամավոր և պարտադիր մեխանիզմները, ինչպես նաև դրանց կիրառման տարբեր մոդելները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում մասնակցություն է ապահովվել լիագումար նիստերին, թեմատիկ քննարկումներին, աշխատանքային խմբերին:

Քննարկումների ընթացքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության կանխարգելման, տուժողների պաշտպանության և աջակցության ոլորտներում իրականացվող աշխատանքները, ինչպես նաև գործող միջգերատեսչական համագործակցության մեխանիզմները:

Մասնակցություն է ապահովվել բռնարարների ծրագրերի և տուժողների աջակցության ծառայությունների համագործակցության, արդյունքների գնահատման, բազմաոլորտ քաղաքականությունների, գենդերազգայուն մոտեցումների և ծրագրերի կայունությանն առնչվող քննարկումներին: Առանձնակի ուշադրություն է դարձվել բռնարարների ծրագրերի արդյունավետության գնահատման գործիքներին, ռիսկերի կառավարման մեխանիզմներին և տուժողների անվտանգության ապահովման հարցերին:

Իրականացված խմբային աշխատանքների ընթացքում քննարկվել են ազգային համակարգերի համապատասխանությունը Ստամբուլյան կոնվենցիայի պահանջներին, ինչպես նաև տարբեր երկրներում կիրառվող մոտեցումները և առկա մարտահրավերները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովը կրել է փորձի փոխանակման և մասնագիտական քննարկումների բնույթ, ուստի ստորագրված փաստաթղթեր կամ ընդունված պարտադիր իրավական որոշումներ չեն եղել:

Միաժամանակ ձեռք են բերվել մասնագիտական կապեր Եվրոպայի խորհրդի, Եվրոպական ցանցի՝ ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի ոլորտում (WWP EN), ինչպես նաև մասնակից երկրների ներկայացուցիչների հետ՝ հետագա փորձի փոխանակման և համագործակցության հնարավորությունների քննարկման նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

1) Ուսումնասիրել ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի ներդրման և զարգացման եվրոպական փորձը՝ Հայաստանի Հանրապետությունում դրանց հետագա կատարելագործման նպատակով:

2) Քննարկել բռնարարների ծրագրերի և տուժողների աջակցության ծառայությունների միջև համագործակցության մեխանիզմների ամրապնդման հնարավորությունները՝ տուժողների անվտանգության ապահովման տեսանկյունից:

3) Ուսումնասիրել արդյունքների գնահատման և տվյալների հավաքագրման գործիքների ներդրման հնարավորությունները՝ ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով:

4) Շարունակել համագործակցությունը Եվրոպայի խորհրդի և ոլորտային միջազգային կազմակերպությունների հետ՝ մասնագիտական կարողությունների զարգացման և միջազգային փորձի ներդրման ուղղությամբ:

Ակնկալվող արդյունքն է ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման համակարգի արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև ոլորտում միջազգային լավագույն փորձի կիրառման հնարավորությունների ընդլայնումը:

Ստորագրությունը, ամսաթիվը

09.06.2026 թ.

Անի Թաթոյան